ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Հարությունյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության և գիտության նախարար

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
2019 թվականի մայիսի 15-17-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթական հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջաննինի

- **ՆՊԱՏԱԿԸ**

2019 թվականի մայիսի 15-17-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում (Պեկին)՝ կայանալիք «Արհեստական բանականություն և կրթություն» խորագրով միջազգային համաժողովին մասնակցելը:

- **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ**

Այցի ընթացքում հանդիպել եմ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթական հարցերով տեղակալ Ստեֆանիա Ջաննինիի հետ: Հանդիպումը տեղի է ունեցել Պեկինում, ուր ընթանում էր ՄԱԿ-ի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության և Չինաստանի կրթության նախարարության կազմակերպած «Արհեստական բանականություն և կրթություն» միջազգային համաժողովը:

Հանդիպման ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթական հարցերով տեղակալի հետ քննարկվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության մի շարք հարցեր: Երկկողմ գոհունակությամբ նշվեց, որ անցած մեկ տարում կողմերի միջև համագործակցությունը եղել է ամենաբարձր մակարդակի, ինչի վկայությունն է այս տարվա օգոստոսին Երևանում կայանալիք «Կայուն զարգացման

նպատակների 4 ուղղությունների տեխնիկական համագործակցության խմբի» ժողովը:
Հանդիպում եմ ունեցել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կրթության նախարար Չընն Բաոշընի հետ: Հանդիպման սկզբում նախարար Չընը շնորհակալություն հայտնեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի և ՀՀ կառավարության կազմակերպած «Արհեստական բանականություն և կրթություն» միջազգային համաժողովին մասնակցելու և նոր ձևաչափի հիմնադիրներից դառնալու համար, ինչպես նաև հաստատեց, որ Հայաստանի և Չինաստանի հարաբերություններն այս ոլորտում դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր դինամիկ զարգացում են ունեցել: Իմ կողմից նույնպես ընդգծվեց այն հսկայական առաջընթացը, որը Չինաստանն արձանագրել է կրթության ոլորտում արհեստական բանականության տեխնոլոգիաների կիրառման առումով, ինչպես նաև այն, որ հայ-չինական հարաբերությունները ներկայում լուրջ ներուժ ունեն: Նախարար Չընը գոհունակություն հայտնեց Երևանում Հայ-չինական բարեկամության դպրոցի հիմնադրման վերաբերյալ: Անդրադառնալով Հայաստանում չինական մշակույթի և կրթության հանրահռչակման հարցում Կոնֆուցիուսի ինստիտուտի դերակատարմանը՝ իմ կողմից կարևորվեց չինական կողմի պատրաստակամությունն ինստիտուտի հնարավորությունների ընդլայնման հետ կապված:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Այն բանից հետո, երբ իմ կողմից ներկայացվեց ներկայումս մշակման փուլում գտնվող կրթության զարգացման ռազմավարությունն ու վերանայվող առարկայական չափորոշիչները՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կրթական հարցերով տեղակալը հայտնեց, որ իրենք պատրաստակամ են համագործակցել Հայաստանի գործընկերների հետ մի քանի ուղղություններով, մասնավորապես, մասնագիտական կրթության ոլորտում, ինչպես նաև առարկայական չափորոշիչների մշակման հարցում տեխնիկական աջակցություն տրամադրելով: Ջաննինին ողջունեց նաև Հայաստանի կրթական համակարգում ընթացող փոփոխությունները, որոնք հաճախ համընկնում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից սահմանված առաջնահերթություններին:

ՀՀ նախարար Չընի հետ գործնական շփման արդյունքում առաջարկ եղավ համագործակցել արհեստական բանականության ուսումնասիրությունների հարցում՝ ընդգծելով չինական կողմի պատրաստակամությունն աջակցելու տեխնոլոգիաների զարգացման գործում: Անդրադարձանք ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի և ՀՀ ղեկավարության հանդիպման ընթացքում արծարծված Հայաստանում չինարենի՝ որպես օտար լեզվի դասավանդման ընդլայնման հնարավորությունը: Այդ համատեքստում առաջարկեցի իրականացնել փորձնական ծրագիր: Նախարար

Չընն իր հերթին Չինաստանի Կրթության նախարարության անունից պատրաստակամություն հայտնեց առաջարկվող ծրագրին աջակցել Հայաստանի մասնագետների գործուղման և վերապատրաստումների հարցում:

Իմ կողմից ներկայացվեց զեկույց «Արհեստական բանականություն և կրթություն» թեմայով, որը ներառել է տվյալ բնագավառում ներկայիս հիմնական ձեռքբերումները և զարգացման միտումները:

Քննարկվեց նաև Հայաստանի և Չինաստանի տեխնոլոգիական և բժշկական համալսարանների համագործակցության հարցը:

Արայիկ Հարությունյան
22.05.2019